ԿԱՅԾԱԿՆԱՅԻՆ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ
ՆՎԻՐՎԱԾ ԷԴՈՒՐԱՐԴ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ս/թ. հունվարի 18-ին, ժամը 15:00-ին Հայաստանի շախմատի ակադեմիան Շախմատի ակադեմիայի ակումբի հետ համատեղ կազմակերպում է Էդուարդ Մնացականյանի հիշատակին նվիրված կայծակնային շախմատի մրցաշար:

Մասնակիցներ

Մրցաշարին կարող են մասնակցել առնվազն երրորդ կարգ ունեցող շախմատիստները:
Մրցաշարը կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով՝ համաձայն ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների:

Ժամակարգ

3 րոպե ամբողջ պարտիայի համար՝ յուրաքանչյուր քայլի համար 2 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Լրացուցիչ ցուցանիշներ

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում, իսկ տեղերը կորոշվեն. հատված Բուհգոլցով, այնուհետև Բուհգոլցով, անձնական հանդիպումների արդյունքի /արդյունքների/ և սև գույնով խաղացած պարտիաների քանակով:

Մրցանակային ֆոնդ

Մրցանակային ֆոնդը կկազմի մուտքավճարների 70%-ը:

Մրցանակներ					
Հիմնական	**I**	**II**	**III**	**IV**	**V**
Լավագույն արդյունք ցույց տված **շախմատիստուհի**					

Լավագույն արդյունք ցույց տված **կարգային** մասնակից					
Լավագույն արդյունք ցույց տված 55+ վետերան մասնակից					
Լավագույն արդյունք ցույց տված 65+ վետերան մասնակից					

Մուտքավճար

Կոչում/գործակից	Մուտքավճար
ՄԳ, ՄՎ, ԿՄԳ, ԿՄՎ	Անվճար
2101 և ավելի վարկանիշ ունեցող մասնակիցներ	3 000 ՀՀ դրամ
III, II, I կարգ – 2100 վարկանիշ ունեցող մասնակիցներ	4 000 ՀՀ դրամ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ - Հիշեցնում ենք, որ մրցաշարի մասնակիցների գրանցումն կատարվում է օնլայն տարբերակով մինչև **հունվարի 17-ը, 18:00-ն**: Հայաստանի շախմատի ակադեմիայի կայքէջում /https://www.chessacademy.am/ անհրաժեշտ է սեղմել **ԳՐԱՆՑՎԵԼ** կոճակը, լրացնել բոլոր դաշտերը և կատարել վճարումը:

Բանկային քարտի բացակայության դեպքում մասնակցության վճարները կարող եք փոխանցել «Շախմատի ակադեմիայի ակումբ»-ի հետևյալ հաշվեհամարին՝

Շահառու՝ «Շախմատի ակադեմիայի ակումբ» ՍՊԸ

Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ

Հ/հ՝ 1570091773770100

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել մրցաշարը, մասնակցի անունը, ազգանունը և հայրանունը, ծննդյան տվյալները, կարգը, մարզիչը և կոնտակտային հեռախոսահամար:

Հեռախոսահամար՝ **010-448479, 099-646885:**

Գրանցումը հաստատվում է վճարումը կատարելուց հետո: